ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17-18-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

24 օգոստոսի 2017թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Հ. Բաբայան
Հ. Իգիթյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 18/08/17թ. «Բանանց»-«Ալաշկերտ» (ԲԽ007) խաղին «Ալաշկերտ» թիմի գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանի (N 1023) ոչ սպորտային պահվածքի մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

2. 21/08/17թ. «Գանձասար-Կապան-2»-«ՖԿ Արցախ» (ԱԽ011) խաղին մարզադաշտում կարգուկանոն չապահովելու մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

1. 18/08/17թ. «Բանանց»-«Ալաշկերտ» (ԲԽ007) խաղին «Ալաշկերտ» թիմի գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանի (N 1023) ոչ սպորտային պահվածքի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

18/08/17թ. «Բանանց»-«Ալաշկերտ» (ԲԽ007) խաղին «Ալաշկերտ» թիմի գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանի (N 1023) ոչ սպորտային պահվածքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ հայտարարել խիստ նկատողություն, «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

2. 21/08/17թ. «Գանձասար-Կապան-2»-«ՖԿ Արցախ» (ԱԽ011) խաղին մարզադաշտում կարգուկանոն չապահովելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 21/08/17թ. «Գանձասար-Կապան-2»-«ՖԿ Արցախ» (ԱԽ011) խաղին մարզադաշտում կարգուկանոն չապահովելու համար,

2.1.1 ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ 1 (մեկ) խաղ անցկացնել առանց հանդիսատեսի, «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

2.1.2 Մանկապատանեկան թիմի մարզիչ Բենիամին Մանուչարյանի (N 769) ոչ սպորտային պահվածքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ հայտարարել խիստ նկատողություն, «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

2.1.3 Տեղեկացնել «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբի ղեկավարությանը՝ աշխատանք կատարել մարզիչների, ոստիկանության աշխատակիցների հետ իրենց պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ